№ 207 Նոյեմբերի 6 (18) 1881 Նոյեմբերի 6 (18) № 207

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Գաւառագրագրացիք դիմում են ըստ դրության
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչքան կարող էինք գործել։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Порядокъ» լրագրի թղթակցութիւնը։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԾԱՌԱՅԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Կ. Պօլսի «Տնտեսական միութիւն հայոց»

ԻՆՉՔԱՆ ԿԱՐՈՂ ԷԻՆՔ ԳՈՐԾԵԼ

Տաս տարվայ ընթացքում, որ „Մշակ“ լրագիրը գոյութիւն ունի, ինչքան ահագին գումարներ ենք հաւաքել մենք այլ և այլ ազգային նպատակների համար։ Հազարներ և հազարներ հաւաքել ենք մենք յօգուտ Հայաստանի սովեալների, յօգուտ „Արարատեան“ և „Միացեալ“ ընկերութիւնների, ստացել ենք բաժանորդագրութիւններ արտասահմանում հայոց օրդան պահելու համար, և այլն և այլն։

Բայց „Մշակը“ որ այդքան գումարներ է ձեռք բերում այլ և այլ նպատակների համար, ինքն հազիւ կարողանում է իր գոյութիւնը պահպանել և եթէ խմբագիրը իր գրպանից չը ծածկէր իւրաքանչիւր տարի լրագրի հրատարակութեան դէֆիցիտը, մեր լրագիրը ամենևին չէր կարող գոյութիւն ունենալ։

Այդպիսով հայոց հասարակութիւնը, որ տալիս է մեզ միջոցներ զանազան ազգօգուտ գործերին օգնելու, ամենևին չէ մտածում վերջնականապէս ապահովել այն լրագիրը, որից յորդորված և որի միջոցով նա կարողանում է օգնել յիշեալ գործերին։

«Մշակը» պահպանելու համար, ամենաքիչը հարկաւոր է անպատճառ 1,200 բաժանորդ, որովհետև հայոց ամենօրեայ թերթ պահպանելու համար հարկաւոր է գոնե 12,000 բուբլ տարեկան ծախս։

Բայց եթէ հայոց հասարակութիւնը տար մեզ երկու հազար բաժանորդ, ուրեմն 20,000 բուբլ տարեկան եկամուտ, մենք այդ գումարից 12,000 բուբլ գործ կածէինք մեր լրագիրը պահպանելու վրա, իսկ մնացած 8,000 բուբլ իւրաքանչիւր տարի գործ կածէինք զանազան ուրիշ անհրաժեշտ ազգօգուտ նպատակների վրա։ Դիցուք հարկաւոր կը լինէր օժանդակել մի եւրօպական լրագրին, որ հայոց դատն է պաշտպանում. և ահա մենք այլ ևս չէինք հաւաքի այդ նպատակով բաժանորդագրութիւն հայոց հասարակութենից, այլ ուղղակի մեզ մօտ եղած ութ հազար բուբլ գումարից կօժանդակէինք յիշեալ օրգանին, և այլն։ Մի խօսքով մեզ մօտ մնացող ութ հազար բուբլ գումարը մենք ամրողջութեամբ գործ կը դնէինք այլ և այլ ազգօգուտ նպատակների վրա, առանց նորից հանգանակութիւններ հաւաքելու, ինչպէս օրինակ թղթակից արտասահմանում պահելու, միանուագ մի որբանոցին կամ դպրոցին օգնելու, հայոց օրգանին օժանդակելու։ Ի հարկէ մենք չենք խօսում այնպիսի արտակարգ դէպքերի վրա, ինչպէս օրինակ սովը, երբ ութ հազար բուբլ գումարը բաւականացուցիչ չէ մեծ առաջադրանքին օգնելու համար։ Այդ տեսակ ժամանակ, ի հարկէ, հարկաւոր կը լինէր նորից դիմել հասարակութեանը, բայց մանր դէպքերում, ինչպէս օրինակ „Ժուրնալ դ՚Օրիան“ լրագրին օգնելու, կամ արտասահմանում թղթակից պահելու և այլն, խմբագրութեան միջոցները կատարելապէս մեզ կը բաւականանային, եթէ հայոց հասարակութիւնը մեր լրագրին մօտ 2,000 բաժանորդ տար իւրաքանչիւր տարի։

Թող հայոց հասարակութիւնը մեզ շատ բաժանորդներ տայ, թող օգնի մեզ նիւթապէս,—և մենք կարող ենք հաւատացնել մեր հասարակութեանը, որ լրագրի ամենաանհրաժեշտ ծախսը ծածկելուց յետոյ, աւելորդ մնացող իւրաքանչիւր կոպէկը իր օգտաւէտ գործադրութիւնը կը գտնի։

Մենք մինչև անգամ չենք ուզում հաշուել և վերադարձնել մեզ այն մեր սեփական գումարը, որ նուիրեցինք ազգին, իւրաքանչիւր տարի մեր գրպանից լրագրի դէֆիցիտը ծածկելով։ Չը հաշուելով մեր անձնական աշխատանքը, որ տաս տարի շարունակ անվարձ էինք կատարում, հաշուելով, առ նուազն, 2,000 բուբլ ամեն տարի,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼՍԻ „ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ“ ՆՈՐԱԿԱԶՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպէս յայտնի է տնտեսական ընկերութիւնները բնականապէս կազմվում են միայն այն ժամանակ, երբ մի երկրի գիւղատնտեսները (գիւղատնտես ասելով հասկանում ենք բոլոր գիւղացիներին և այն ամենին, որոնց սեպհական զբաղմունքն է գիւղական պարապմունքներ) ժամանակի պահանջներից թելադրված ցանկանում են փոխել մշակութեան դարեւոր, նահապետական ձևերը, և փոխադարձ օժանդակութեամբ ինքեանք վեր են կենում կատարելագործելու և կարգաւորելու իրենց տնտեսական պայմանները։ Ուրիշ կերպ այդ նպատակով կազմված ընկերութիւնները անբնական են։ Անբնական են, որովհետև նոցա նպատակն է չը սպասել տնտեսական զարգացման բնական ընթացքին. չը սպասել, մինչև որ կենսական պայմանները այնքան փոխվեն, որ իրանք գիւղատնտեսները հանգամանքների բերմամբ վերահասու լինեն իրենց յառաջադիմութեանը։ Նոցա նպատակն է արտաքուստ ազդել, տարաժամ մի դարկ տալ գիւղատնտեսութեանը, արթնեցնել քնից մշակին։

Այդ տեսակ մի ընկերութիւն ունի իր գոյութեան հիմունքը։ Քաղաքակրթեալ ազգերի օրինակը մեզ ցոյց է տալիս, որ մի ժողովուրդ մինչև իր տնտեսական բարօրութեան հասնելը անցնում է մի քարքարուտ ճանապարհ, որի վրա անդունդներ ու խոչընդոտներ տեղի են տալիս յաճախ անցորդին պատճառելով նորան տեսակ տեսակ աղէտներ ու թշուառութիւններ, և յետամնացելով նորա բնական յառաջխաղացութիւնը։ Տնտեսապէս յետամնաց ազգերը անգիտակցաբար կընկնեն նոյն անդունդների մէջ, որոց մէջ երբեմն մաքառում էր այսօրվայ յառաջադէմ ազգը։ Ուստի պէտք է ցոյց տալ նորանց մի հարթված ճանապարհ, պէտք է նախապատրաստել նորանց դիմադրող լինելու մերձակայ վտանգին. պէտք է նորանց սովորեցնել ազգերից փորձված հնարներն ու միջոցները դուրս գալու իրենց այժմեան դրութիւնից դէպի լոյս աշխարհը, պէտք է առաջնորդել նորանց դէպի գիտակցական գործողութիւնը, որով մարդ լինում է ոչ թէ բնութեան ծառայ, այլ նորա տէրը, նորան ծառայեցնողը։ Պէտք է առաջնորդել ասում ենք, որովհետև մի ազգի տնտեսական այժը կազմող դասը խաւարի մէջ է ապրում և խիստ դանդաղ է կատարում իր քայլերը հանգամանքների պատճառաւ. ուստի կարօտ է նա ձեռնտու արտաքին այժի՝ բարօրութեան շաւղի մէջ ընկնելու։ Բայց ով կարող է կազմել ձեռնտուութեան այդ այժը—կարողներ շատ կան, բայց մենք ալ՝քի առաջ ունենք նոցանից մինը—տնտեսագիտաց ընկերութիւնը։

Տնտեսագիտաց ընկերութիւնը, ինչպէս յայտնի է նոյն իսկ խօսքից, կազմված է լինում գլխաւորապէս տնտեսագէտ անձերից, այսինքն այնպիսիներից, որոնք գիւղատնտեսութեան տեսական մասը ուսումնասիրած լինելով կարող են առաջնորդներ լինել գործնականը յառաջ տանելու։ Բայց նախ քան առաջնորդներ դառնալը, նոքա պարտական են ծանօթանալ գործնական կեանքի հետ, ուսումնասիրել գիւղատնտեսութեան պայմանները նշանակալի տեղում, նորա թոյլ կողմերը և այլ պարագաները իմանալ։ Ընկերութիւն կազմող անձանց այս տեսակ վարմունքը խիստ կարևոր է, որովհետև առանց դորան նորանք կարող են ընկնել շատ սխալների մէջ և «յօնքը չինելու տեղ աչքը հանել»։ Բժիշկը նախ պէտք է ծանօթանայ իր օգնութեանը դիմող հիւանդի դրութեանը հետ և ապա ըստ այնմ բեցեպտներ նշանակէ։ Այն բժիշկը, որ այդպէս չէ վարվում, նորա դիրքը խիստ խախուտ է լինում և դիւրակործան։ Այսպէս էլ մի ընկերութիւն, որ ցանկանում է մի երկրի տնտեսական ցաւերին դարման տանել։

Այսպիսի մի յառաջաբանից յետոյ մասնաւորենք խօսքերս և ուշադրութիւն դարձնենք «Տնտեսական միութիւն հայոց» անուանված Կ. Պօլսի նորակազմ ընկերութեան վրա։

Նախ քան այդ ընկերութեան հիմնվելը Կ. Պօլսի հայերը տատանում էին, թէ արդեօք կարելորութիւն կայ այժմեան պարագայից մէջ զարգացնել գիւղատնտեսութիւնը Հայաստանում, և փոխանակ գնալու այդ երկիրը և ուսումնական տեղեկութիւններ հաւաքելու այդ խնդրի մասին, նոքա բաւականանում էին մի քանի վայրիվերոյ տեղեկութիւններով և զատարկ ենթադրութիւններով։ Ոմանք պնդում էին, ուրիշները հերքում էին տնտեսական խնդրի կարևորութիւնը։ Շաղկապվող առարկութիւնները պատճառաբանվում էին նորանով, թէ Հայաստանի գիւղացին տնտեսապէս ապահովված է այնքան, որ մինչև անգամ նորա բերքերը իրենց առատութիւնից փտում են ամբարանոցներում. թէ լաւ ճանապարհների բացակայութիւնից ապարդիւն և անհնար է գիւղական տնտեսութեան քարձրացնելը և այլն։

Այս երկու կէտը մենք ցանկանում ենք փարքննութեան առնել, որովհետև այդ հակառակորդ կարծված առարկութիւնները, մեր կարծիքով, ընդհակառակն ջատագով են լինում տնտեսական խնդրին։

1) Հայաստանի գիւղացուն չէ կարելի համարել տնտեսապէս ապահովված, յառաջ բերելով թէ նորա բերքերը փտում են ամբարանոցներում։ Մի գիւղացի, ինչքան էլ որ նա նահապետական չարքաշ կեանքով ապրի, չէ կարող բաւականանալ իւր երկրից ստացած անմիջական բերքով, նա իր տնտեսական պիտոյքը լցուցանելու համար՝ միշտ կարօտութիւն է զգում այնպիսի իրերի, որոնք չեն բուսնում իրեն հողում, որոնք կամ օտարերկրեայ բերքեր են, կամ գործարանական արդիւնքներ։ Գիւղացու կեանքը հետզհետէ փոխվում է. նորա մէջ յառաջ են գալիս նորանոր պիտոյքներ։ Այդ ամենը հայթայթելու համար դրամ է հարկաւոր. նոյնպէս քաղաքական ու եկեղեցական տուրքերի համար շատ անգամ դրամ է հարկաւոր լինում։ Իսկ գիւղացին դրամը ստանում է միայն իր բերքերի արտահանելով։ Դորանից պարզ երևում է, թէ այն գիւղացին, որ չէ կարողանում արտահանել իր բերքերը, այլ նոցա փտեցնում է ամբարանոցներում, նա չէ կարող տնտեսապէս ապահովված համարվել, որովհետև տնտեսական ապահովութիւնը նորանում չէ, որ գիւղացին կարողանայ իր փորը հացով լեցնել և նստել հանգիստ իր տեղը. մտէք գիւղական կեանքի մէջ և դուք կը տեսնէք բազմաթիւ կարիքներ, որոնք բոլորը փող են պահանջում չափաւոր գիւղացուց։ Սակայն թողնենք այդ. մթթէ կարելի է կարծել, որ Հայաստանի ամեն գիւղացի գոնեայ հացից ապահովված լինի։ Հայաստանի նման մի լեռնային երկիր չէ կարող իր ամեն մի մասում միապէս արգաւանդ հող և յաջող հանգամանքներ ունենալ. մթթէ չը կան և այնպիսի տեղեր, ուր գիւղացիք հացի էլ կարօտութիւն քաշեն, ուր երկիրը այնքան աղքատ լինի, որ չը կարողանայ յիապէս վարձատրել գիւղացու աշխատանքը և ուր հարկաւոր լինի մացնել մշակութեան նոր ձևեր։ Մենք չափազանցութիւն չենք համարում ենթադրել այդ։

2) Լաւ ճանապարհների պակասութիւնը ոչ թէ խափանում է տնտեսական խնդիրը. այլ ընդհակառակը դրդում է նորան. դա մի չարիք է, որի զօրութիւնը կը թեթևանայ գիւղատնտեսութեան յառաջադիմութեամբ. բայց թէ ինչպէս, այդ մասին մենք վերջը կը խօսենք։

Այժմ խօսենք, թէ ինչ կարող է և պէտք է անել Կ. Պօլսի տնտեսական ընկերութիւնը։

Մենք դժուարանում ենք մի որոշ բան գուշակել ընկերութեան նախագծից, այնքան նա անորոշ է. սակայն ուրիշ կերպ էլ չէր կարելի ըստասել, որովհետև չենք կարծում, որ ընկերութեան անդամները այնքան անխոհեմ լինէին, որ խակին և եթէ մեռելին և գծագրէին իրենց ապագայ գործունէութեան ուղղական ճանապարհը այն ասպարիզում, որի հետ դեռ ծանօթ չեն։ Ուրեմն խոհեմութիւնը և գործի ապագայ հաստատութիւնը պահանջում են, որ նոքա նախ ուսումնասիրեն իրենց գործունէութեան ասպարէզ դարձող երկիրը, և յետոյ ըստ այնմ որոշեն թէ ինչ բան սկսեն և ինչ ուղղութիւն ունենան։ Դորա համար խիստ օգտակար կը լինէր, եթէ առ այժմ Հայաստան ուղարկէին տնտեսագէտ երիտասարդներին նոցա ձեռքերը տալով պատրաստ պրոգրամներ հետազօտութեան համար, որոշելով թէ ինչ բաների վրա հարկաւոր է աւելի ուշադրութիւն դարձնել։ Այդ երիտասարդները վերադառնալով կը մատուցանէին իրենց հաւաքած տեղեկութիւնները ընկերութեան ժողովին, ուր ընդհանուր խորհրդակցութեամբ կը վճռվէր ընկերութեան անելիքը։ Այդ ժամանակ միայն կարելի կը լինէր մի որոշ ընթացք բռնել հիմնվելով իրական պարագաների վրա։ Այդ ժամանակ միայն կարելի կը լինէր և մեզ—հայերիս յոյս դնել ընկերութեան հաստատութեանը վրա, որի յարատևութիւնը կախված կը լինէր այնուհետև նորա յետագայ լրջամիտ գործողութիւններից։

Մեր ասածներից երևում է, որ մենք անպատեհ և տարաժամ ենք համարում այժմէն իսկ կազմել մի բացորոշ նախագիծ ընկերութեան գործառնութեանց համար։ Սակայն, ինչպէս երևում է, արդէն լրագիրներում սկսվել է քննվել նախագծի հարցը, մի քանիս ևս առանձին պլաններ են կազմում ընկերութեան գործնական ճանապարհը որոշելու։ Այդ տեսակ քննադատութիւնները, ի հարկէ, ունեն իրենց օգտակարութիւնը, և ընկերութիւնը կարող է նոցանից օգուտ քաղել, բայց երբեք չենք կարծում, որ ընկերութիւ-

որ գնում էինք մեր գրպանից լրագրի ծախսը պահպանելու համար, մենք տաս տարվայ ընթացքում նուիրեցինք ազգին 20,000 բուբլ։

Այդ քան հազար բուբլն էլ մենք չենք պահանջում հասարակութենից որ մեզ վերադարձնի, հաստատ գիտենալով որ երբէք յետ չենք ստանայ հայոց հասարակութենից այդ մեր գումարը։ Միայն խնդրում ենք այսուհետև տալ մեզ աւելի մեծ թիւ բաժանորդների, որպէս զի բացի «Մըշակից» կարողանայինք ուրիշ մի քանի ծախսեր էլ հոգալ մեր խմբագրական փողերից, առանց անդադար դիմելու հասարակութեանը այլ և այլ հանգանակութիւններով։

Մենք կրկնում ենք որ մեր տաս տարվայ անձնական աշխատանքն էլ մենք չենք հաշուում։ Մի որ և է ծխական, կամ միջնակարգ դպրոցի ուսուցիչ իրաւունք ունի ստանալ տարեկան մէկ, կամ երկու հազար բուբլ ռոճիկ, ճեմարանի վարժապետները, որոնք ոչինչով բարձր չեն նոյն միջնակարգ դպրոցների ուսուցիչներից, կարող են ստանալ տարեկան չորս, հինգ, վեց հազար բուբլ ռոճիկ,—իսկ մի հայոց ամենօրեայ թերթի խմբագիր ոչ թէ միայն իրաւունք չունի իր աշխատանքի համար, թէ կուզ մի հազար բուբլ տարեկան համեստ ռոճիկ ստանալու, այլ պէտք է իր գրպանից էլ իւրաքանչիւր տարի երկու, երեք հազար բուբլ տայ, որպէս զի ժողովրդի մէջ մայրենի ընթերցանութիւնը տարածի։

Ի՞նչով խմբագրի աշխատանքը պակաս է ուսուցչի աշխատանքից, եթէ աւելի դժուար և աւելի ծանր չէ։

Այլ և ս չենք խօսում այն բանի վրա որ Եւրոպայում քաղաքական թերթերի խմբագիրները ահագին ռոճիկներ են ստանում իրանց ծանր աշխատանքի համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդագին 41 բուբլ 40 կոպէկ հետևեալ անձերից։ Մեսրոպ քահ. Գիւլումեանց, Ալէքսանդր Տէր-Մկրտչեանց, Միքայէլ Տէր-Միքայէլեանց, Մինաս Արարատեանց, Սարգիս Հախնազարեանց, Լեոն Թիւսիկեանց, Պօղոս Ադամիրզեանց, Յովհաննէս Փանոսեանց, Սարգիս Դուլզարեանց, Սարգիս Յակոբեանց, Շահնազարեանց, Ալէքսան Աբրիանց, Հայրապետ Խօջամիրեանց, Յարութիւն Փանոսեանց, Յովհաննէս Կոստանդինեան, Խուդի Մարգարեան, Մկրտիչ Ամատունի, Մելքոն Քալանթարեանց։ Առաջվայ բաժանորդական փողերի հետ կանի 740 բուբլ 13 կոպէկ։

—

ՍՂՆԱԽԻՑ ստացանք 8 բուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիանի» համար հետևեալ անձերից։ Յովհաննէս Ղալաբէգեան, Վարդան և Ստեփան Լենիկորովիանք, Ալէքսանդր Ամիրաղեան, Սիմէօն Ղորղանեան, Ալէքսանդր Մաթէշվիլի։ Իսկ փոստի ծախսը վճարել են Շաչէլ և Գարեգին Տէր-Ստեփանեան։ Պարտաւորութիւն ենք համարում յիշել որ Սղնախը մինչև այժմ ուղարկել է բաժանորդագին 101 բուբլ 40 կոպէկ։ Այժմ ստացված 8 բուբլ մեր խմբագրութեան մէջ եղած ընդհանուր բաժանորդական փողի հետ վիճենայի լրագրի համար, կանի 748 բուբլ 13 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են ՄՕՍԿՎԱՑԻՑ որ պ. Քանանեանցի ինիցիատիվով Լազարեան ճեմարանի հայ ուսուցիչները արդէն կազմել են մի քանի խորհուրդներ ճեմարանում հայոց լեզուի դասաւանութեան հարցը մշակելու համար։ Կազմվում է այդ լեզուի դասաւանութեան համար մանրամասն պրոգրամա և ցուցակ այն հայերէն գրքերի, որոնք հայ աշակերտների ընթերցանութեանը մատչելի են։ Շատ ցանկալի է որ մասնագէտ անձինք հայ մամուլի մէջ իրանց կողմից օգնեն այդ կարևոր հարցի կանոնաւոր մշակութեանը։

—

Մեզ հաղորդում են Մոսկվայից որ այդտեղից էլ ուղարկվում են բաժանորդագիներ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրին։ Մոսկվայից, «Փարոս» ամսագրի միջնորդութեամբ հասցրած է Վիճենայի լրագրին մօտ 100 բուբլ արդէն և դարձեալ 50 բուբլ հաւաքվեցաւ այնտեղ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են պ. Բաֆֆիի Ազուլիսից գրած նամակի վերաբերմամբ հետևեալը։ «Պ. Բաֆֆիի մեզ ուղարկած թերթիկը հայ ծածկագրութիւն է, որ վիմագրված կարելի է տեսնել Mélanges Asiatiques, tirés des bulletens de l'Academie Impériale, St. Petersb. 1864 գրքում, հանգուցեալ ակադէմիկոս Բրոսէի յօդուածում Varietés Arméniennes (եր. 65—77)։ Բէրժէից ուղարկած այս ծածկագրութեան օրինակները կարդացել է Բրոսէի համար մեր յարգելի հայրենակից, պրոֆէսոր Ք. Պատկանեան։ Այդ ծածկագրութեան մի քանի խօսքեր գրված են արաբական այլանդակված թուագրերով։» Իսկ մի քանիներ գրված են սեպաձև տառերի նմանութեամբ, ինչպէս և տեսանք թերթիկի վրա։

—

ՍՏԱՎՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են։ «Մեր քաղաքի հայ ժողովուրդը տեսնելով, որ հին եկեղեցին շատ փոքր և հասարակ շինված է, վճռում է մի նոր եկեղեցի կառուցանել։ Սկսում են փողեր ժողովել։ Այդ ժամանակ պ. Մակար Պօպով, նոյնը որ դիտաւորութիւն ունի ահագին կոականել յօգուտ Նոր-Նախիջևանի, տեսնելով ժողովրդի ցանկութիւնը ունենալ մի նոր եկեղեցի, առնում է այդ հաւաքած չնչին գումարը և խոստանում է իր հաշուով շինել եկեղեցին։ Երբ տարում կառուցվում է բաւական մեծ և գեղեցիկ եկեղեցի։ Վերջապէս հոկտեմբերի 5-ին կատարվեցաւ նոր եկեղեցու օծման հանդէսը։ Թեմական առաջնորդը հրաւիրել էր մօտիկ քաղաքներից քահանաներ, տիրացուներ և դպիրներ, որոնց ճանապարհի ծախսը և Սբ. տավրօպօլում ապրուստը խոստացել էր իր կարողութիւնից հոգալ պ. Պօպով։ Հրաւիրվածները գալիս են, մի շաբաթ քաղաքում մնալու դիտաւորութեամբ։ Սրանց համար ոչ տուն է պատրաստված, ոչ կերակուր կայ։ Տեղիս երկու քահանաներ, իրանց կարողութեան չափ բնակեցնում ու կերակրում են հրաւիրվածներին իրանց նեղ բնակարաններում։ Օծման հանդէսը վերջանում է, հրաւիրվածները գնում են ստանալու իրանց ճանապարհի ծախսը պ. Պօպովից։ սա միայն երկուսին վարձատրում է ինչպէս հարկն է, իսկ մնացածներին միայն տալիս է ճանապարհի ծախս, կոպէկ կոպէկ հաշուելով անհրաժեշտ ծախսը, իսկ մի քանիներին ծախսից էլ պակաս է տալիս, վերջապէս մի երկուսին էլ ոչինչ չէ տալիս։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ" ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

«Порядокъ» լրագրի մէջ կարդում ենք

նը այնքան անխոհեմ լինի, որ կուրօրէն հետևի մասնաւոր անձանց գծած գործունէութեան եղանակին, որովհետև նոքա կարող են շատ սխալ լինել։

Պ. Նիկողոսեանի յօդուածից անդեկանում ենք, որ պ. Փանոսեան առաջարկում է հիմնել կ. Պոլսի մօտ մի տիպար ագարակ (образцовая ферма), ուր պէտք է պարապել անասնարուծութեամբ, պանիրագործութեամբ, իւղագործութեամբ, հաւապահութեամբ և այլն, և ուր պէտք է մշակվեն Հայաստանից բերված հում բերքերը։

Զը գիտենք, ինչու պ. Նիկողոսեան հրճվում է այդ անձի տուած «երևելի պլանների» վրա, բայց մենք չենք կարող յափշտակվել նոցա երևելիութեամբ, այլ մտադիր ենք նայել, թէ ինչքան նոքա իրական են։

Մայրաքաղաքի մօտ երբէք հաշիւ չը կայ գիւղատնտեսական ֆերմա բանալ, ուր մշակվէին Հայաստանի հում բերքերը։ Եթէ կարելի լինէր այդ բերքերը Հայաստանից հասցնել մինչև կ. Պոլիս, աւելի օգտակար կը լինէր ըստ մեծի մասին վաճառել նոցա առանց մշակելու։ Անասնարուծութեամբ, պանրագործութեամբ, իւղագործութեամբ և այլն օգտակար է միայն կենտրոններից հեռու տեղերում պարապել, որովհետև այնտեղ աւելի ածանագին են կարևոր եղած առարկաները, ինչպէս են խոտը, յարդը, ընդեղէնները, կաթը և այլն, իսկ մայրաքաղաքի մօտ՝ օրինակ մի վեղրо կաթը աւելի մեծ գին ունի, քան նորանից պատրաստված պանիրը կամ իւղը։ մի պուդ խոտը կամ յարդը աւելի մեծ գին ունի, քան թէ նորանից ստացված միսը կամ մի այլ արդիւնքը և այլն։ Ուսումնասիրեցէք մայրաքաղաքի անտեսական պայմանները և դուք կը համոզվէք, որ մի բերք այնտեղ աւելի շահաւէտ է հում հում վաճառել, քան նորան մշակել, արդիւնագործել և այնպէս վաճառանել։ Մեծ քաղաքներին մերձակայ կալուածներում չէ յաջողվում ոչինչ արդիւնագործութիւն, եթէ հում արդիւնքները կարելի է լինում անարատութեամբ քաղաք հասցնել։ Բացի դորանից հում բերքերը հեռու Հայաստանից բերվելով, նոցա արժէքի վրա կը ծանրանայ ահագին ճանապարհածախքը և կրկնակի ու եռապատիկ կը թանգացնէ արտադրութեանց գինը։ Ուրեմն մայրաքաղաքի մօտ գիւղատնտեսական ֆերմա հիմնելը անօգուտ է և վնասակար։ Այդի առաջ պէտք է ունենանք և այն, որ մայրաքաղաքի մօտ աշխատանքի գինը խիստ մեծ է. իսկ եթէ կարելի եղաւ համայնական հիմունք տալ նորան, համայնքի անդամները ոչ թէ «վայելուչ», այլ խիստ նուազ վարձատրութիւն պէտք է ստանան, իսկ թէ դորանով համայնքի վարչութիւնը շատ անդամակիցներ կը կարողանայ գրաւել, այդ հասկանալի է։ Զարմանում ենք պ. Փանոսեանի յափշտակութեանը վրա. նա կամենում է իր ֆերմայով կերակրել համարեա ամբողջ կ. Պոլսի հայերին, բացի դորանից մի մեծ գումար յետ ձգել, Հայաստանում բանկեր ու կալուածներ հաստատել։ Մենք ուրիշ ոչինչ չենք կարող ասել այդ ցնորութեանց մասին, միայն այն թէ այդ մարդու «եռանդը գովելի է» և ուրիշ ոչինչ։

Շատ կարելի է որ վաղն էլ մի ուրիշ Փանոսեանց ելնէ համոզելու, որ Հայաստանի գիւղացու տնտեսական դրութիւնը բարձրացնելու համար պէտք է Լօնդօնի մօտ մի «տիպար ագարակ» հիմնել Հայաստանի հում բերքերը մշակելու համար, և իրեն ցնորաբանութիւնները ծածկելու համար սկսէ յարձակվել իր նմանների «պատուախնամութեանց» դէմ։ Դա ի հարկէ այնքան զարմանալի բան չի լինի յափշտակվող սրտերի համար։

Այս առարկութիւններից յետոյ ի զուր չէր լինի ներկայացնել մեր առաջարկութիւնը հասարակաց քննութեանը. թերևս նա էլ նիւթ կազմէ պարզելու մի ընկերութեան գործունէութեան խնդիրը։

Այդ առաջարկութիւնը ամփոփում ենք երեք կէտերի մէջ, որոնց ամեն մինի վրա կը խօսենք առանձին։

1) Այլի առաջ ունենալով Հայաստանի գիւղատնտեսութեան մի քանի յայտնի հանգամանքները, մենք լաւագոյն ենք համարում, որ մի ընկերութիւն, որ կանչված է նորա (գիւղատնտեսութեան) զարգացմանը ձեռնտու լինելու, սկզբնապէս դարձնէր իր ուշը գիւղատնտեսական բերքերի արդիւնագործման արհեստների վերայ (сельскохозяйственная техника)։ Հասարակ ինչու համար։

Յայտնի է, որ անտեսական յառաջադիմութեան գլխաւոր խոչընդոտներից մինն է արդիւնքների արտահանման դժուարութիւնը։ Մի երկիր, որի արդիւնահանութիւնը կանոնաւոր և յաջող է ընթանում, նորա անտեսական զարգացումը հաստատ հիմքերի վրա է դրված լինում. իսկ ընդհակառակը երբ արդիւնահանութիւնը դժուարանում է լաւ ճանապարհների բացակայութիւնից, դժուարանում է և տնտեսական յառաջադիմութիւնը։ Այդ դժուարութիւնը աւելի զգալի է լինում մանաւանդ այն նահանգների համար, որոնք գլխաւոր վաճառականոցներից հեռի են ընկած։ Արդիւնաբերողը իր հում բերքերը, ինչպէս են զանազան տեսակ մրգեղէն, ընդեղէն, միս, կաթ, խոտ, յարդ և այլն, չէ կարող հեռաւոր հրապարակները վաճառահանել, որովհետև նոցանից (բերքերից) մի քանիսը այնքան ածանագին են, որ չարժէ ճանապարհածախքին. այսպէս են՝ խոտը, յարդը և այլն. միւսները այնքան փափուկ առարկաներ են, որ մինչև տեղ հասնելը փչանում են և կորցնում են իրենց արժէքը. այսպէս են պտղեղէնները, կաթը և այլն։ Երրորդների գինը հրապարակներում խիստ փոփոխական է լինում, այնպէս որ հեռաւոր արտադրողը մեծ բիակ արած կը լինի իր ապրանքը ուղարկելով այնտեղ. այսպէս են կենսական ամենակարևոր առարկաները, ինչպէս ընդեղէնները։ Սակայն մարդու հնարագիտութիւնը մասամբ մօտեցնում է հեռաւոր հրապարակը արտաբերողին։ Այդ հնարագիտութեան մի արգասիքն է արդիւնագործութիւնը, որով հում բերքերը վերափոխվում են վաճառահանման աւելի ընդունակ առարկաների, այսինքն հում բերքերից ստացվում են այնպիսի առարկաներ, որոնք աւելի կարող են դիմանալ ճանապարհին, որոնց արժէքը այնքան կը բարձրանայ, որ մի աննշան արտադրանք միայն կը կազմէ նոցա գնի վրա, որոց գինը աւելի քիչ փոփոխութեան է ենթակայ լինում հրապարակներում և այլն։ Այսպիսի առարկաներն են՝ տեսակ տեսակ պանիրներ և իւղեր, շաքարեղէններ, օսլայ (крахмалъ), մրգերից պատրաստված անուշեղէններ, մինչև անգամ ըմպելիքներ աւելի մօտ հրապարակների համար։ Արդիւնագործութեան այս առարկաները, որովհետև պատրաստված են լինում հում բերքերի միայն մի քանի բաղադրական նիւթերից, աւելի թեթևացնում են վաճառահանման առարկայի կշիռը, բայց երբէք նորա արժէքը։ Այսպէս մի հարիւր ֆունտ կաթից ստացվում է մօտ 10 ֆունտ պանիր կամ 4 ֆունտ իւղ, իսկ կաթի արժէքը չունեցող նիւթը — ջուրը, որ 87% է կազմում, զատվում է, ստացվում են կաթի միայն թանգագին հիւթերը, ինչպէս են կազէինը և իւղը։ Ճանապարհի համար 100 ֆունտի վարձ պէտք է վճարէինք, եթէ ուղղակի կաթը արտահանէինք. իսկ վճարում ենք միայն 4—10 ֆունտի համար նորանից պատրաստված պանիրը կամ իւղը արտահանելով։ Այսպէս են և միւս առարկաները։

Թէև այդ արդիւնագործութեանց շատերը արդէն ի վաղուց գոյութիւն ունեն Հայաստանում, սակայն նոքա նահապետական ձևով մշակվելով և չունենալով կանոնաւոր կազմակերպութիւն, չեն կարող արտահանութեան մշտական առարկայ դառնալ և իրենց նրբութեամբ ու ազնուութեամբ մրցել օտարերկրեայ արտաբերութեանց հետ և հրապարակ վաստակել մեծ կենտրոններում։ Ուստի կարևոր է նոցա ազնուացնելուն և կազմակերպելուն ձեռնարկել։

Բայց ինչպէս հնարաւոր է գործել այդ նպատակի համար. ահա մի խնդիր, որի վրա յանգում է մեր առաջարկութեան առաջին կէտը։ Այդ մասին մեր վճիռը տալու համար, մատնացոյց ենք անում քաղաքակրթեալ ազգերի վարմունքը դոյն նպատակաւ։ Նոցա մէջ միայնակ միջոցը ճանաչված է գիւղացիների համայնական ընկերութիւնները (acconiaçia)։ «l'union c'est la force» (ոյժը միութեան մէջն է) այդ է ընկերութեանց նշանաբանը։ Քանի գիւղացիք առանձին առանձին են գործում, քանի նոքա անկարոյժեր են կազմում, նոքա տկար են լինում և անընդունակ մեծ գործերում. բայց երբ միանում են այդ անկարոյժերը և կազմում են մի ամփոփ ոյժ, այնուհետև նոքա պաշտպանված լինելով դժնդակ պարագաների դէմ, կարող են ձեռներէց լինել մեծ մեծ և իրենց խիստ շահաւէտ գործերի։ Այդպիսի միութեան մէջ իւրաքանչիւրի շահերը ոչ թէ միմեանց հակառակ կը լինեն, այլ ընդհակառակը չափազանց ներդաշնակ։ Ամերիկայի մանր ֆերմերները և Զուիցերիայի գիւղացիք լաւ հասկանալով համայնական գործողութիւնը հետամուտ են եղած համայնական պանրոցներ բանալու։ Առանձին մի փոքր ֆերմեր կամ գիւղացի չի կարող այնքան մեծ քանակութեամբ կաթ արտաբերել, որ նրանից կարող լինի մեծ քանակութեամբ պանիր պատրաստել հեռու արտահանութեան համար. բացի դորանից արհեստի համար հարկաւոր եղած ծախքերը չեն կարող հատուցանվել փոքր արդիւնագործութիւնով։ Բայց ընդհակառակն մի քանի փոքր ֆերմերներ կամ գիւղացիք միանալով, հաւաքում են իրենց փոքրաքանակ կաթերը և նոցանից կազմում են կաթի մի մեծ քանակութիւն, որի համար արդարև արժէ մի հասարա-

հեռանալ թղթակցութիւնը։ Վերջապէս երկիրը պատասխան տուեց գերմանական կանցլերի քաղաքականութեանը, ցոյց տուեց, թէ մինչև որ աստիճան համակրում է „գեղական սոցիալիզմին“, որ նրան առատութեամբ խոստանում էին։

Հարցը ուղղակի և կարճ էր դրված, նոյնպիսի կարճ և ուղղակի պատասխան էլ ստացվեցաւ։ Ներկայումս բոյխստագի կազմակերպութիւնը ճշդութեամբ չէ կարելի որոշել, որովհետև ընտրութիւնների հետևանքները կատարելապէս յայտնի չեն. մի քանի ընտրողական շրջաններից թերի տեղեկութիւններ են ստացված, միւսներից բոլորովին լուր չը կայ։ Դրա պատճառն այն է, որ փոքր քաղաքներում, մանաւանդ գիւղական շրջանների մէջ քուէների հաշիւը չափազանց դանդաղ է կատարվում, որովհետև այդ գործին սովոր անձնաւորութիւններ չը կան։ Միայն մի բան ճշդութեամբ և հաստատ յայտնվեցաւ, այն է, որ հասարակական կարծիքը հակվում է դէպի ձախ, ինչպէս ընդունված է ասել պարլամենտական լեզուով։ Ամեն տեղ, ուր քուէները հաշված են, յայտնվում է, որ պահպանողականները յաղթված են։ Նրանք մինչև այն աստիճան յաղթված են, որ միայն 8 կամ 10 տեղ կարողացան իրանց կանդիդատներին գոնեա կրկնաքուէարկութեան ենթարկել։ Բոլոր կրկնաքուէարկութիւնները, որոնք այս տարի չափազանց շատ են, ընկնում են արմատական կուսակցութիւններին. առաջադէմները սոցիալ-դեմոկրատների հետ, կենտրոնը դարձեալ սոցիալ-դեմոկրատների հետ և այլն։ Ամենից նշանաւորն այն է, որ պահպանողականները անողորմ կերպով յաղթվեցան հէնց այն ընտրողական շրջանների մէջ, որտեղ նրանք ամենից շատ յոյս ունէին ընտրված լինելու։ այն է արդիւնաբերական նշանաւոր կենտրոններում։ Կաշառող խոսակցութիւնները „հայրենի արդիւնաբերութեանը հովանաւորելու“ մասին չազդացին պահպանողականներին։ Ընտրողները ցոյց տուին իրանց քուէարկութեամբ, որ կաշառքը նրանց վրա այնպիսի ազդեցութիւն չէ կարող ունենալ, ինչպէս կարծում էին Բիսմարկի ծառաները, որոնք զանազան խոստումներով կամենում էին կանցլերի համար խոնարհ մեծամասնութիւն ձեռք բերել։ Այդ պարոնները այժմ առիթ ունեն երկար մտածելու, որ ամեն մարդու չէ կարելի իր չափով դատել։ Այնու ամենայնիւ այդ մարդիկ շատ նպաստեցին, որ ընտրութիւնները իշխան Բիսմարկին թշնամական բնաւորութիւն ստացան, իսկ այդ թշնամութիւնը պարզ յայտնվեցաւ թէ ազատամիտներին և թէ պահպանողականներին քուէարկելու ժամանակ։ Այժմ երբ քուէները հաշուում են, ծայրագոյն է թվում առաջադէմների կատածը, որ „կորչի Բիսմարկը“ նշանաբանը կարող էր նրանց գործին վնասել։ Հէնց այն կանդիդատները, որոնք զգուշութիւնը մոռանալով, խստութեամբ յարձակվում էին Բիսմարկի վրա, ամենից շատ ընտրողական քուէներ ստացան։ Իսկ նրանք, որոնք մասամբ միայն յարձակվում էին պետական կանցլերի ներքին քաղաքականութեան վրա, իսկ նրան գովում էին, կամ հաւատացնում էին, որ նա բարոյապէս գերազանցում է ամենքին, միայն պետական շահերի մասին է մտածում և այլն, այդպիսիները կամ կատարելապէս յաղթված են, կամ ընտրված են շափից դուրս թոյլ մեծամասնութեամբ։ Ակներև է, որ հասարակութիւնը այժմեան ընտրութիւններով պատասխանեց պաշտօնական թերթերի առաջարկութեան. «կամ Բիսմարկի հետ, կամ նրա դէմ»։

Ցուսալով „կայսերութեան ստեղծողի“ ժողովրդականութեան վրա, կառավարութիւնը ոչ թէ միայն ուղղակի դրեց այդ հարցը, այլ մինչև անգամ կայսրի անունն էլ խառնեց ընտրողական կռուի մէջ։ Կիսապաշտօնական և պաշտօնական լրագիրները անդադար նկատում էին, որ այժմեան ընտրութիւնները պէտք է ցոյց տան, թէ գերմանական ժողովուրդը մինչև ո՞ր աստիճան հաւատարիմ է գահին, միապետական սկզբունքին և կայսրի անձնաւորութեանը, որ առաջադէմները գաղտնի հանրապետականներ են և նրանց քուէ տալը նշանակում է հօհենցօլերների անկումը ցանկանալ։ Նոյնը կրկնում էին պահպանողական կանդիդատները իրանց ընտրողական ճառերով։ „Մենք միապետութեան հաւատարիմ ծառաներն ենք, ասում էին նրանք, մենք կը պաշտպանենք իշխան Բիսմարկի քաղաքականութիւնը։ Ով որ մեզ հետ է, նա իշխանին պաշտպանում է։ Ով որ մեր դէմ է, նա իշխան Բիսմարկի դէմ է։“ Մի խոսքով ամենքն հարցը ուղղակի էին դնում, կամ լինի միայն մշակութեան ձևերը կանոնաւորելով և կատարելագործելով, որի համար նա (գիւղացին) կը գործադրի իւր ստացած արդիւնքի մի մասը. կատարելագործված երկրագործական գործիքներ և այլն այդ ժամանակ միայն կարող են տեղի ունենալ։

4) Գիւղացու մէջ կը տարբանայ համայնական գործողութեան գաղափարը. նա կը հասկանայ միասին գործելու օգուտները, կըմբռնէ, որ զանազան չահեր այդ ուղղութեամբ, ոչ թէ իրար հակառակ են գործում, այլ ունեն իրանց ներդաշնակութիւնը. նա կը սովորէ այդ հիմնարկութեան մէջ հաշիւ պահպանել և ազնիւ վերաբերվել դէպի ուրիշների, դէպի հասարակաց չահերը։

5) Որովհետև արդիւնագործութեան միջոցով հում բերքերի միայն մի քանի հիւթերն են արտադրվում, մնացորդը կարելի է գործադրել տեղական պիտոյքների համար, ինչպէս կենդանիներին կերակրել, կամ, որ աւելի օգտաւէտն է, սովորեցնել գիւղացոց նորանով արգաստաւորել իրենց հողը՝ ազատելով երկիրը անխնայ հարստահարութիւնից։

6) Որովհետև արդիւնագործական արհեստները կարելի կը լինի մացնել և այն գիւղերում, ուր թուրքեր կամ այլ ցեղեր են ապրում, Հայաստանի այլացեղ ժողովուրդները կը միանան կուլտուրական ընդհանուր կապով։

Քուրդերը մինչև այժմ մեզանում ճանաչվում են իբրև ժողովրդի պարազիտներ. բայց եթէ առանց այլայլման քննենք, կը տեսնենք, որ նոքա իսկապէս պարազիտներ չեն, այլ երկրի տաւարապահները և խաշնարածները. նոցա մէջ զարգացած են մի քանի արդիւնագործութիւնները. մեզանում յայտնի են՝ քրքի պանիրը, քրքի իւղը և այլն։ Եթէ յաջողվի քուրդ աշակերտներ ընդունել վերոյիշեալ կալուածներում (գործնական ուսումնարաններում,) և նոցանից իւղագործ և պանիրագործ լաւ վարպետներ պատրաստել, այն ժամանակ կարելի կը լինի քուրդերի մէջ տարածել արդիւնագործութեան արհեստները և նոցա տնտեսական միջոցներ հայթայթել դրանով։ Թող ներուի, որ մենք տնտեսական կէտից ենք նայում ամեն երևոյթի վրա. եթէ քուրդերը տնտեսապէս ապահովված լինեն, նոքա կը թողնեն իրենց յափշտակաւէր ոգին. եթէ նոքա մինչև այժմ հարստահարիչ ժողովուրդ են կազմում, դրա պատճառները պէտք է փնտռել տնտեսական զանազան հանգամանքների մէջ։ Բայց թողնենք այդ խնդիրը։

Ամփոփելով մեր խոսքերը, պէտք է ասենք, որ մենք ընտրեցինք մի որոշ ճանապարհ մի ընկերութեան համար, որ ձեռնամուխ է լինում բարձրացնելու Հայաստանի գիւղատնտեսութիւնը. մենք ընկերութեան վրին չը բարդեցինք զանազան ուղղութեամբ գործողութիւններ, որովհետև մենք հաւատացած ենք, որ մի ձեռքով երկու կամ աւելի ձմերուկներ չէ կարելի բռնել։ Մենք ցոյց տուինք արդիւնագործման արհեստների նշանակութիւնը, բայց այդ արհեստներից միայն մինը կամ մի քանիսը կարելի է իրագործել ի սկզբան։ Ընկերութեան գործունէութիւնը սահմանափակեցինք միայն Հայաստանի հողի վրա և չը տարանք նորան հեռու սահմաններ. մեր հայացքը այդ մասին նորանում էր, որ ընկերութիւնը գործելով այդ հողի վրա, մի և նոյն ժամանակը միջնորդ կարող էր լինել Հայաստանի քրքրերի արտահանմանը, ազատելով նոցա արդիւնաբերողին չարչիների և այլ պարազիտների կեղեքումներից։ Ընկերութեան գործունէութիւնը տարածեցինք առհասարակ բոլոր գիւղացիների վրա, որոնք Հայաստանի հողն են մշակում. մեր կարծիքով այս ուղղութեամբ գործող մի ընկերութեան ձեռնտուք շատ կը լինեն, նոյն իսկ տերութիւնը և թուրք հասարակութիւնը կօժանդակէ գործին։

Վերջացնում ենք մեր յօդուածը, ի սրտէ ցանկանալով, որ Ս. Պետերբուրգի նորակազմ ընկերութիւնը գործնական ընթացք բռնէր. առաջի ունենալով Հայաստանի գիւղատնտեսական պայմանները. թող չը բաւականանայ վեր ի վերոյ նախագիծներով և անհիմն գործողութիւններով, եթէ նա իրաւամբ գրուված է Հայաստանի գիւղացուն երջանկացնելու հարցով, եթէ մտադիր չէ այդ գիւղացու թշուառութիւնը առարկայ շինել իր յափշտակական ծաղրածութեանց, թող ուրեմն աշխատի մի հատատ հիմք տալ իր գործունէութեանը։ Թող գիտենայ, որ լոկ ուսումնասիրած ընկերութիւններ հիմնել աւելի հեշտ է քան թէ անհատական, որովհետև առաջին դէպքում ժողովուրդը բիչ է հետաքրքրվում և անկարող է քննադատել այդ տեսակ գործունէութիւնը, ինչքան էլ նա վատ լինէր. իսկ երկրորդ դէպքում անկիրթը կրթեալից աւելի է հետամուտ լինում, անխնայ քննադատում և յիմարութիւնը այպանում։

Մոսկվա. Գիւղական